ԿԱՐԾԻՔ

Վիկտորյա Վարդանի Մելքոնյանի՝
«Սոցիալական մեդիայի դերը ՀՀ-ում քաղաքական հաղորդակցությունների փոխակերպման պայմաններում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝
ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության տեսություն»
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության արդիականությունը

Ներկայացված ատենախոսությունը նվիրված է ժամանակակից հասարակությունների համար միանշանակ արդիական հիմնախնդիրների՝ տեղեկատվական միջավայրում ձևավորվող քաղաքական և սոցիալական գործընթացների, տեղեկատվական ազդեցությունների, ինչպես նաև դրանց անվտանգության և կառավարման հարցերի վերլուծությանը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է ինչպես գլոբալ տեղեկատվական փոխակերպումներով, այնպես էլ Հայաստանի և տարածաշրջանի համար հատուկ նշանակություն ունեցող քաղաքական, անվտանգային, տեղեկատվական մարտահրավերներով:

Հատկապես վերջին տասնամյակների ռազմական բախումները, համավարակային ճգնաժամը, ինչպես նաև թվային հաղորդակցությունների և սոցիալական մեդիայի դերի աճը ցույց են տվել, որ տեղեկատվահաղորդակցական, հատկապես՝ թվային տեխնոլոգիաները վերածվել են քաղաքական պայքարի, հանրային կարծիքի ձևավորման և հասարակական կայունության վրա ազդող առանցքային գործիքների, որոնց օգտագործման տիրույթն ու բնույթը կախված է քաղաքականության սուբյեկտների շահերից: Սա նշանակում է, որ սոցիալական մեդիաների՝ որպես քաղաքական գործընթացներում օգտագործվող միջոցների, գործառույթները կարող են չարտացոլել օբյեկտիվ իրականությունը, և ծառայեցվել նեղ քաղաքական շահերին: Դրանով սոցիալական մեդիաները Է՛լ ավելի են հեռանում իրականության օբյեկտիվ արտացոլման, հաղորդակցական էթիկայի, առհասարակ հաղորդակցական սկզբունքրից, քան դասական ԶԼՄ-ը:

Աշխատանքի կառուցվածքը և մեթոդաբանական հիմքը

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և ենթագլուխներից, եզրակացությունից և

հավելվածներից: Գրականության և աղբյուրների ցանկը լայն է և ընդգրկում է ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից արտասահմանյան և տեղական հետազոտություններ, միջազգային կազմակերպությունների փաստաթղթեր, օրենսդրական ակտեր և մեդիա նյութեր, ինչը վկայում է հեղինակի ոլորտային իրազեկվածության և թեմայի բազմակողմանի ուսումնասիրման ձգտման մասին: Շնորհակալ եմ հեղինակի կողմից կիրառված նաև իմ աշխատակքների համար, որոնք վերաբերում են քաղաքական գործընթացների, այդ թվում՝ 2018թ. "Թավշյա հեղափոխության" վրա սոցիալական մեդիաների կոնկրետ ազդեցությունների չափմանը: Ժամանակակից քաղաքագիտությունը շատ հարցերում ճշգրիտ գիտություն է, ուստի և ցանկացած ազդեցության չափումն ու մեխանիզմների դուրսբերումն անհրաժեշտություն է: Այդ իմաստով ներկայացվող ատենախոսությունն ունի հստակ կիրառական նշանակություն:

Աշխատանքի ուժեղ կողմերը

Ատենախոսության ուժեղ կողմերից կարելի է առանձնացնել.

- ընտրված թեմայի համադրված դիտարկումը քաղաքական գիտության, մեդիա ուսումնասիրությունների և տեղեկատվական անվտանգության շրջանակներում,
- արդիական միջազգային և տարածաշրջանային օրինակների դիտարկումը,
- տեսական հասկացությունների համակարգված ներկայացումն ու կիրառումը կոնկրետ վերլուծական դեպքերում,
- տեղեկատվական ազդեցությունների և քաղաքական գործընթացների միջև փոխկապակցվածության քննարկումը,
- աշխատանքի կիրառական նշանակությունը՝ պետական կառավարման, մեդիա քաղաքականության և տեղեկատվական անվտանգության ոլորտների համար:
- Աշխատանքում կիրառվել է հետազոտական մեթոդների համակցություն՝ տեսական վերլուծություն, կոնտենտ-վերլուծություն, էմպիրիկ տվյալների երկրորդային մեկնաբանում, հեղինակի կողմից իրականացված դաշտային սոցիոլոգիական հարցումներ: Սա ատենախոսության արժեքավոր կողմերից է:

Հեղինակը ցույց է տալիս, որ իր հետազոտությանը մասնակցած հանրույթը, այդ թվում՝ երիտասարդությունը, սխալվում է իրենց պնդումներում, որ հեշտությամբ կարող է տարբերել իրական և կեղծ տեղեկատվությունը սոցիալական մեդիայում, որ

չի գտնվում ապատեղեկատվության ազդեցության տակ, և այլն: Հեղինակի այդ եզրակացությունները օգնում են կրկին համոզվել հասարակությունների սպառողական վարքի, մեդիա-անգրագիտության փաստերի մեջ:

Դիտողություններ և հարցադրումներ

Բացի դրական կողմերից, ատենախոսության տեսական և հետազոտական մասերի վերաբերյալ առկա են որոշ դիտողություններ, որոնք կրում են կառուցողական բնույթ և ավելի շատ խորհուրդներ են՝ գիտական հետազոտությունների որակի բարձրացման ուղղությամբ:

1. Ատենախոսությունը պաշտպանվում է "Քաղաքական գիտության տեսություն" մասնագիտությամբ, մինչդեռ աշխատանքի թեման՝ «Սոցիալական մեդիայի դերը ՀՀ-ում քաղաքական հաղորդակցությունների փոխակերպման պայմաններում», առնվազն սոցիալական մեդիաների դերի, քաղաքական հաղորդակցությունների փոխակերպումների տիրույթներով վերաբերում է քաղաքական գործընթացներին: Այս հարցերն ատենախոսության մեջ նաև վերլուծվում են որպես գործընթացներ: Բացի այդ, հեղինակն իրականացնում է դաշտային հետազոտություն, այդ թվում՝ սոցիոլոգիական հարցումներ, որոնք ատենախոսության արժեքավոր կողմն են, բայց նույնպես նշանակում են, որ ատենախոսությունը տեսական չէ: Սա հեղինակի թերացումը չէ. անհրաժեշտ է, որպեսզի մասնագիտական դասիչի և թեմայի ձևակերպման, եռյակի աշխատանքի ժամանակ այդ հարցերին ավելի մեծ ուշադրություն դարձվի:
2. Տեսական մասում տեղեկատվական, տեղեկատվական-հոգեբանական և քաղաքական ազդեցությունների հասկացությունների միջև հարաբերակցությունը երբեմն մնում է ոչ լիովին հստակեցված: Ցանկալի է այդ եզրույթների ավելի խիստ սահմանում և տարբերակում՝ հենվելով նաև քաղաքական պրակտիկայի, և քաղտեխնոլոգիաների առանձնահատկությունների վրա:
3. Աշխատանքում քաղաքական հաղորդակցությունների կառուցվածքի վերաբերյալ առկա է անհստակություն. օրինակ՝ հավելված 1-ում ներկայացված սխեմայում սոցիալական մեդիան դիտվում է որպես հաղորդակցական միջավայր, այդ թվում՝ քաղաքական մասնակցության համար, մինչդեռ սոցիալական մեդիայի հիմնական գործառույթը ոչ թե միջավայրային է, այլ միջնորդող՝ որպես հաղորդակցությունների ալիքի:

Պատահական չէ, որ ցանկացած՝ դասական կամ թվային մեդիաները այդպես էլ կոչվում են. մեդիա՝ միջոց, իսկ քաղաքական հաղորդակցությունների բոլոր մոդելներում մեդիաները միջոց են, կամ ալիք, մինչդեռ միջավայր են այն տեղեկությունները, որոնք կարող են փոխանցվել քաղաքականության սուբյեկտների կողմից սոցիալական մեդիաների՝ որպես ալիքների, օգտագործմամբ:

4. Ատենախոսության տեքստում, ինչպես նաև հեղինակի կողմից հրատարակված և ցանկում ընդգրկված երկրորդ հոդվածում /այդ թվում՝ վերնագրում/ օգտագործվում է "Սոցիալական ԶԼՄ" հասկացությունը: Ճիշտ է օգտագործել Սոցիալական, կամ առցանց մեդիա հասկացությունները, մինչդեռ ԶԼՄ-ը վերաբերում են ավանդական զանգվածային լրատվական միջոցներին՝ հեռուստատեսությանը, ռադիոյին և տպագիր մամուլին:
5. Ատենախոսական հետազոտությունն իրականացվել է տարբեր մեթոդների համադրմամբ, այդ թվում՝ հարցումների: Եթե առցանց քանակական հարցման կազմակերպման մոտեցումներն աշխատանքում ներկայացվում են, ապա չկարողացանք գտնել անհրաժեշտ տվյալներ այն մասին, թե որքան են եղել ֆոկուս-խմբերի մասնակիցները, ինչու՝ միայն երիտասարդներ, եթե առցանց մեդիայից Հայաստանում ակտիվ օգտվում են բոլոր տարիքային խմբերը, այժմ նաև՝ ավագ սերունդը, ընդորում, արդեն իրականացված հետազոտությունների համաձայն՝ հենց ավագ սերունդն է հաճախ տարածում ատելության խոսք և քաղաքական ապատեղեկատվություն: Բացի այդ, աշխատանքում չգտանք խորին հարցազրույցների իրականացման սկզբունքներ, մասնակիցների ընտրության մոտեցումներ: Աշխատանքում բացակայում են հարցաշարեր և հարցաթերթեր, որոնց ներառումն անհրաժեշտ էր՝ ցույց տալու, թե ինչպես է իրականացվել հետազոտությունը: Առանց այդ տեղեկատվության հարցումների արդյունքների արժանահավատությունը նվազում է:
6. Ելնելով գիտության՝ օբյեկտիվ և անկողմնակալ լինելու սկզբունքից՝ հեղինակը փորձում է չտալ գնահատականներ սոցիալական մեդիաներում քաղաքական-հաղորդակցական այն գործընթացներին, որոնք ուղեկցել են "Թավշյա հեղափոխությունը" և 2020թ. Արցախյան երրորդ պատերազմը: Մասնավորապես, "Հաղթելու ենք" և այլ պետական և մասնավոր մեդիա-հաղորդագրությունների բնույթը՝ ըստ քաղաքական գործընթացների վրա ազդեցության, չեն գնահատվում: Միևնույն ժամանակ, զուտ մասնագիտական

առումով այդ և նման այլ տեղեկատվական-հաղորդակցական երևույթների ազդեցության գնահատումը՝ որպես կիրառված մեդիա-գործիքների, ընդունելի և տեղին կլիներ:

Եզրակացություն

Չնայած նշված դիտողություններին՝ ատենախոսությունը ներկայացնում է ինքնուրույն գիտական աշխատանք, որտեղ բարձրացված են արդիական հիմնախնդիրներ, կիրառված են համապատասխան տեսամեթոդական մոտեցումներ և ստացված են գիտական հետաքրքրություն ներկայացնող էմպիրիկ տվյալներ և եզրակացություններ: Հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածները համահունչ են ատենախոսության բովանդակությանը և արտացոլում են հետազոտության հիմնական արդյունքները:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Վ. Վ. Մելքոնյանի ներկայացրած ատենախոսությունը համապատասխանում է քաղաքական գիտությունների թեկնածուի ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսը արժանի է ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Արթուր Վլադիմիրի Աթանեսյան
քաղաքական գիտությունների դոկտոր, ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի
Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

21.01.2026 թ.

Քաղաքական գիտությունների դոկտոր Ա. Վ. Աթանեսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Մերի Վազգենի Հովհաննիսյան
Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ